



### 23. ՄԻՐՁԱ ՄԱՀՄՈՒԴ

Միրզա Մահմուդ Արևելոց թագավորի քաղաք կապրեր: Գիշեր  
մե էրազ կը տեսնա, գելնա ուր մամուն կըսե.

— Մամո՛, գիշերսի էրազմ՝ իմ տեսի:

— Ի՞նչ էրազ, լա՛ո, հլա խսա էրե սա՛նք:

— Խսա չըմ էնի,— կըսե Միրզա Մահմուդ,— չորի՞ն չըսիր  
«խեր էղնի՛»:

Կէրթա ուր պապու մոտ, կըսե.

— Ապո՛, գիշերսի էրազմ՝ իմ տեսի:

— Ի՞նչ էրազ, խսա էրե սա՛նք:

— Խսա չըմ էնի, չորի՞ն չըսիր՝ «խեր էղնի՛»:

Կէրթա մըտ գզիր, մըտ ըռես, մըտ տերտեր, կըսե.

— Գիշերսի էրազմ՝ իմ տեսի:

Կըսին.

— Միրզա Մահմուդ, խսա էրե սա՛նք:

— Չէ, խսա չըմ էնի. չորի՞ն չըսիք՝ «խեր էղնի՛»:

Կէրթա մըտ թագավոր:

— Թագավոր ապրած կենա, գիշերսի էրազմ՝ իմ տեսի:

Թագավոր կըսե.

— Ի՞նչ էրազ, Միրզա Մահմուդ, խսա էրե սա՛նք:

— Չէ, վոլա, չըմ ըսի, չորի՞ն չըսիր՝ «խեր էղնի՛»:

Թագավոր կը հեռատի ղՄիրդա Մահմուդ կը թալի զնդան։  
Թագավորի աղջիկ ծոռվ կէղնի վրը Միրզա Մահմուդին, զնդանից  
հարի աղջկա յօգն լաղըմ կը փորե, չրմեն գիշեր կէրթա աղջկա  
մոտ ու գիկա։ Մուրաթ մե գընցնա, Արեւատոց Թագավոր ղազարի  
գիկա, գելնա իրեք հատ մեկ տեսակի ձի կը ճամպե Արեւելոց Թա-  
գավորին, թե հանեցիր էդ իրեք ձիանոց ո՛ր մեկն է մամ, ո՛ր մեկն է  
մեծ քուռակ, ո՛ր մեկն է պզտիկ քուռակ, ես իմ աղջիկ տամ քու  
տղին, թե չըհանեցիր՝ դո՛ւ զքու աղջիկ տուր իմ տղին։ Թագավոր  
կը տեսնա էդ ձիանոց բանձրութեն մեկ, բաշն ու գլուխ՝ մեկ, պոշն  
ու չոտնեք՝ մեկ, ինչօր մկրատով կտրիս, կը շիվարի մնա, չը կոնա  
հանե չիրարուց ո՛ր մեկն է մամ, ո՛ր մեկ մեծ քուռակ, ո՛ր մեկ պըզ-  
տիկ քուռակ։

Թագավորի աղջիկ կըսե.

— Միրզա Մահմո՛ւդ, բան հմլա-հմլա՛ է, իմ պապ շիվարեր է,  
չըկոնա ղԱրեւատոց Թագավորի ջուարն իդա։

Միրզա Մահմուդ կըսե.

— Գնա քու պապուն ըսե, թըղ իրեք օր վըր չիրարու ձիանուն  
դարի ու առվուտ կերցու, ջուր ըսկի շիտա, վրա շորս ավուր թրոյ  
տանե ջրով լիք գոան մոտ, ո՛ր մեկ օր շորս չոտքով թալեց զինք  
ջրի մեջ, զջուր խմեց, էնի պզտիկ քոռակն է, ո՛ր մեկ օր զուր չառ-  
ջի էրկու չոտնեք մտուց մըջ գոան, ջուր խմեց, էնի մեծ քուռակն է,  
ո՛ր մեկ օր մինակ զուր դունչ մտուց մըջ ջրին, խմեց, էնի մամն է։  
Իմալ օր աղջիկ կըսե, Թագավորն հմալ կէնե, ղԱրեւատոց Թա-  
գավորի ջուար կիտա։

Մուրաթ մե գընցնա, էդ Թագավոր գելնա շարխածուրիկ փետ  
մե կը ճամպե Արեւելոց Թագավորին, զփետն հմալ էր շարխել տվի,  
օր մարդ չըր գի՛նի ո՛րն է հաստ գլուխ, ո՛րն է բարակ գլուխ։

Թագավորի էլլիք ըսին.

— Մեր Թագավոր կըսե, թե կոցար հանեցիր՝ ո՛ր մեկն է իդա  
փետի հաստ գլուխ, ո՛ր մեկն է բարակ գլուխ, զիմ աղջիկ տամ ուր  
տղին, թե չը կոցար հանեցիր, ինք թըղ զուր աղջիկ տա իմ տղին։

Թագավոր կը շիվարի կը մնա՝ Միրզա Մահմուդ աղջըկան կը  
սորվըցու, աղջիկը գիկա Թագավորին կըսե.

— Զփետ թալ մըջ ջրին, ո՛ր մեկ գլուխ օր սկավ մըջ ջրին, էնի  
հաստ գլուխն է, ո՛ր մեկ օր մնաց դուս, էնի բարակ գլուխն է։

Թագավոր հմալ կէնե, զէլլիք կը դնե վըր ճամպուն։

Վրա իրեքին Արեւատոց Թագավոր խալխան մե կը ճամպե, կըսե.

— Թե չը կոցար զմառթալ մեկ դըրբով ծակել տվիր, դու զքու աղջիկ տուր իմ տղին, թե կոցար՝ ես դիմ աղջիկ կիտամ քու տղին: Միրզա Մահմուդ աղջըկան կը սորվըցու, աղջիկ գիկա ուր պապուն կըսե:

— Ձմառթալ դիր վըր չերդըքին, զարրադաստ մարդ մե րի՛ թըղ նետով դարկե հմա մառթալի օռթալախ, մառթալ կը ծակի:

Թագավոր զարրադաստ մարդ մե կանչել կիտա, զմառթալ կը դնե վըր չերդըքի ծակին՝ կը դարկե, հըտ զարկելուն մառթալ կը ծակի: Արևստոց թագավորի էլչիք կէրթան կըսին:

— Թագավոր ապրած կենա, Արևելոց թագավոր զքու իրեք ասած լե կատարեց, դու զքու աղջիկ պտի տաս ընդրա տղին: Հանդե թատարուք կը տեսնան, օր գան զքու աղջիկ տանին:

Արևելոց թագավոր դուռընմիշ կէղնի՝ ո՞ր ճամպինք զմեր հարս բերինք, ո՞ր չը ճամպինք, աղջիկ կըսե:

— Էլ ո՞ր պտի ճամպիս, ՂՄիրզա Մահմուդ ճամպե:

ՂՄիրզա Մահմուդ զնդանից կը հանին, ղթատարուք կը տեսնան, կը ճամպին, օր զԱրևստոց թագավորի աղջիկ բերե: Միրզա Մահմուդ գընկնա ճամպա: Կէրթա, շատ կէրթա, քիչ կէրթա, կը տեսնա մարդ մե հանդե կանուկ վըր ճամպուն ու պշղեք է էրկինք կիշկե:

— Բարի լուս քըզի, ախպեր:

— Աստծու բարին, Միրզա Մահմուդ:

— Էդ ի՞նչ է հմալ պշղեքիս էրկինք կիշկիս:

— Իդա իրեք օր է գիմ նետ թալեր իմ դըխ էրկինք, էնի կիշկիմ, թե ե՞ր գընկնա գետին: Միրզա Մահմուդ, աստված հաջողե, չո՞ւր կէրթաս:

— Կէրթամ Արևստոց թագավորի աղջիկ հարս բերիմ:

— Ձիս լե չը տանի՞ս քու հետ:

— Յորի՞ն չըմ տանի, արի՛ էրթանք: Քու անունն ի՞նչ է:

— Պակաս Եետ քալող Ալի:

Կէրթան, կէրթան, կը տեսնան մարդ մե զանկաջ դրեր է վըր գետնին, անկաջ կէնե:

— Բարի լուս քըզի:

— Աստծու բարին, Միրզա Մահմուդ:

— Էդ ի՞նչ է հմալ անկաջ կէնիս:

— Քառսուն խաթ ցածր գետնի տակ սխտոր կը ծեծին, էնե անկաջ կէնիմ, տեսնամ ի՛մալ կը ծեծին:

- Քու անունն ի՞նչ է:
- Իմ անուն՝ Պակաս Խուլ Ալի: Յո՛ւր կէրթաք:
- Կէրթանք հարս բերինք:
- Ես լի ձրզի չընկեր:
- Կէրթան, կէրթան կը տեսնան շոքորեժ շաքշաք մարդ մե մեկ շենք կը թալե, մեկ վերստ կէրթա:
- Բարի լուս:
- Աստժու բարին, Միրզա Մահմուդ:
- Քու անունն ի՞նչ է:
- Իմ անուն՝ Պակաս Բելուղ Ալի: Խեր էղնի, յո՛ւր կէրթաս հմլա քոմով:
- Կէրթանք հարս բերինք:
- Ես լի ձրզի չընկեր:
- Կէրթան, կէրթան կը տեսնան մարդ մե հանգե գաբեր է վըր գետին, ջուր կը խմե. էն դախ օր կուլթ մե կառնե, ուր բերնի տեղ պետ կը ցամքի, օր զգուխ կը վերցու, գետի ջրեր գիկան խառվին չիրար:
- Բարի լուս, ախպեր:
- Աստժու բարին, Միրզա Մահմուդ:
- Ախպեր, քու անունն ի՞նչ է:
- Իմ անուն՝ Քըչկեր Ալի: Յո՛ւր կէրթաք:
- Կէրթանք Արևատոց թագավորի աղջիկ հարս բերինք:
- Ես լի ձրզի չընկեր:
- Կէրթան, կէրթան՝ կը տեսնան մարդ մե զսազն առեր ի ձեռք ու տնկըռ-տնկըռ սազ կը զարկե: էն գախ օր սազ կը զարկե՝ ծառեր կը զարկվին չիրար, ծաղկըներ կը ժողվին, քարեր կը թռվոկան, կը քիսնան չիրար, կէղնին փշուր-մշուր, սար ու ձոր ժաժքի պես կէրերան:
- Ախպեր, բարի լուս քըզի:
- Աստժու բարին, Միրզա Մահմուդ:
- Քու անունն ի՞նչ է:
- Իմ անուն՝ Կես-սագրաճ Ալի:
- Միրզա Մահմուդ դուշնմիշ կէղնի, օր հարսնքին սազըանդ պետք է, կըսե.
- Չիգա՛ս մեր հետ:
- Գիկամ: Հմա դո՛ր կէրթաք:
- Կէրթանք հարս բերինք:
- Ես լի ձրզի չընկեր:

Կէրթան, կէրթան՝ կը տեսնան մարդ մե՛ զչվան թալեր է մե՛ս  
պալ մե, քընց բլուր մե, դուղե շալկե տանե:

— Բարի լուս քըզի:

— Աստժու բարին, Միրզա Մահմուդ:

— Էդ ի՞նչ է կէնիս, — կը հարցու Միրզեն:

— Զիդա պալ գուզիմ շալկիմ տանիմ:

— Քու անուն ի՞նչ է:

— Իմ անո՞ւն՝ Անուծ Ալի: Մկա յո՞ւր կէրթաք:

— Կէրթանք հարս բերինք:

— Ես լե ձըզի չընկեր:

Միրզա Մահմուդ կը տեսնա, օր հարսնած թամամ էղավ, գընկ-  
նան ճամպա ու կէրթան: Շատ կէրթան, քիչ կէրթան, Միրզա Մահ-  
մուդ կը տեսնա, օր հանդե մոջըման քարվան էկեր է ասըովեր է  
առվի մե, չը կոնա չընցնա, կառնե վարոց մե, կը դնե վըր առվին,  
քարվան գընցնա: Մոջըմներու գլխավոր կըսե.

— Դու իգա աղեկութեն մըզի էրիր, ա՛ն իդա իմ մազ քու  
մոտ, ինչ գախ նեղ չընկար՝ զմազ տուր կրակ, մենք քըզի կը հաս-  
նինք:

Կէրթան, կէրթան կը հասնին Արևպտոց թագավորի տուն: Խա-  
բար կիտան, թագավորին, թե Արևելոց թագավորի հարսնածն էկեր  
է, օր գքու աղջիկ տանե:

Թագավոր կըսե.

— Զըդոնք տարեք լցրեք յօդե մե, հմալ խոլայի հալով զաղջիկ  
չըն կոնա տանի:

Թագավորն ու ուր նազիր-վազիր կը նստին խորուրդ կէնին,  
ընդոք օր խորուրդ կէնին՝ Պակաս խուլ Ալին զականջ կը դնե վըր  
պատին:

— Հը՛շ, հը՛շ կէցեք, ախպրտիք, — կըսե, — դինա՞ք ինչ կըսին:  
Թագավոր կըսե՛ մեծ կարաս մե հրիսա էփեք, լուսուն թե կոցան  
զկարսի հրիսեն կերան, խլըսցուցին՝ զաղջիկ կիտանք, թե չը կըո-  
ցան՝ չընք իդա:

— Յա՛, յոթ հոգով ի՛մալ կարաս մե հրիսա խլըսցունք, — կը-  
սին հարսնածներ:

Քչկեր Ալին կըսե.

— Էզի իմ պարտք, դուք ըսկի հոգ մ՛էնեք:

Հուսուն օր գիկան, թագավորի մարդիկ՝ քասա վըր քասին կը  
կրին, ու Քչկեր Ալին կուտե, աման չըն կոնա հասուն չիրարու: Կա-  
բաս հրիսեն կը խլըսի, մարդ գրեբան կը սրբե, կանի մեկ դեն:

Թագավորն ու ուր մարդիկ կը նստին խորուրդք: Պակաս խուլ Ալին ղանկաջ կը դնե վըր պատին, կըսե.

— Հը՛շ, հը՛շ, թագավորի վագիր կըսե՝ լուսուն հարսնածի կերակուլի մեջ աղու թալեք, օր ուտին մեռնին:

Հարսնածի խուրում կը կոտրի: Կես-սաղրանդ Ալին կըսե.

— Ըսկի մը՛ վախենեք. իմ պարտք՝ ձրզի ազատել:

Լուսուն օր սեղան-սուֆրեն կը պարզին, զկերակուլի ամենը կը շարին վրեն՝ սաղրանդ զուր սազ կառնե ձեռք, կը զարկե, օր կը զարկե՝ ամենը դելնան խաղ, կը թովովան, կը ղարկըվին չիրար՝ կոտիկ վըր քասին, քասեն վըր մաթրաթին, շանախ վըր շամլաքին, փարշ վըր կժան, կուժ վըր ղղկին, շըր՛խկ հա թըրը՛խկ շարվե շարան կէրթան դուս, շարդ ու փշուր կէղնին, շներ, կատվներ կը թափվին վըր հաց ու ղատին, կուտին, չըմեն կը փիտնան:

— Հը՛շ, հը՛շ, խորուրդք է. նագիր կըսե, կոտ մե կորեկ ցփնինք մըջ արտին, թըղ ժողվին, թե կոցան ժողվին, լցին ի կոտ, հատ մե չը պակսավ, զաղջիկ կիտանք, թե չէ՝ չընք իդա:

Միրզա Մահմուդ զմոջման մազ կիտա ի կրակ, աղոթրան ղրո չըր ղացվի, մոջըման քարվան էկավ կանավ արտի գլուխ: Կորեկ ցանեցին, մոջըմներ թափան վրեն, ժողվին բերին լցին ի կոտ, հլա բան մե լե չեվելցավ:

— Հը՛շ, հը՛շ,— կըսե Պակաս խուլ Ալին,— դինա՞ք ինչ, չըսօր էրկու-իրեք օր է, օր թագավոր Բաղդադու խալիֆին թուղթ է ճամպի, մըզի լուսուն պտի ըսին, օր թուղթ մը լե մենք ճամպինք՝ Մեր թուղթ թե շուտ էկավ՝ զաղջիկ կիտան, թե ըդոց թուղթ տարող շուտ էկավ, զաղջիկ չըն իդա:

Պակաս քելող Ալին կըսե.

Ըպա գիմ շաքչաք չոտներ ո՞ր օրվան իմ պահի:

Ձթուղթ կառնե, գընկնա ճամպեն: Մեկ շենք՝ մեկ վերստ, օր կը վոազնա՝ մեկ շենք շորս-հինգ վերստ: Կէրթա Բաղդադ, զթուղթ կիտա խալիֆին, զպատասխանն կառնե, գիկա կես ճամպին զթուղթ կը դնե անկըջի չետե, կը պառկի քնի:

Թագավորի թուղթ բերող գիկա տեսնա, օր Պակաս քելող Ալին քնուկ է, զթուղթ անկըջի չետեեն օր կը քաշե, ձեն կէրթա չընկնա Պակաս խուլ Ալու անկաջ:

— Տղե՛կներ,— կըսե,— թագավորի թուղթ բերող Պակաս քելող Ալու անկջի չետեից զթուղթ քաշեց, ձեն չընկավ անկաջսի, ըպա էնի շուտ պատասխանեն պտի բերե՛:

Պակաս նետ թալոզ Ալին զուր նետ կը թողն, իրեք ավուր ճամպա կէրթա քիսնա Պակաս քելոզ Ալու անկաջ, գիմնա, կը տեսնա, օր թուղթ չկա, զոռ կիտա չոտնեբուն, կը հասնի զթուղթ կը խլե. կը բերե կիտա թաղավորին: Էրկու օր յետև նոր ուր թուղթ բերող զիկա:

Պակաս խուլ Ալին զանկաջ կը դնե վըր պատին, փշու մե կը մնա, կը ծիծղա:

— Ի՞նչ կա, Խո՛ւլ:

— Ի՞նչ կա՞,— թագավորն ու ուր նազիր-վազիր խաբար տվին, օր դիշերսի առնին զաղջիկ ու փախնին:

— Փախնի՛ն, զհոգին ուրանց չո՛ւր կը խլըսցուն իմ ձեռքեն,— կըսե անուժ Ալին:

Կառնե զչվան կէրթա, կը փաթե թագավորի յօդեն բոլոր, զմեջը կիդա դեմ, օր կը շալկե՝ պթպթուն կառնե յօդի չառիք, գերներ կը խախտին, պատեր ու քարեր գընկնան, մարդիկ կը փախնին յեկնան դուա: Միրզա Մահմուդ ու չընկերտանք զորս բոլոր կառնին, թագավորի նազիրն ու վազիր կըսին.

— Թասլի՛մ, թասլի՛մ: Աղջիկ ձրզի հալալ էղնի, տարեք ինչ գախ գուզիք:

Միրզա Մահմուդ ղԱրևպտոց թագավորի աղջիկ կառնե գիկա, հարի գիկա Արևելոց թագավորի աղջիկ կը պարկի բերե տղե մե: Թագավոր զուր աղջիկ լե, ղԱրևպտոց թագավորի աղջիկ լե կիտա Միրզա Մահմուդին, կէղնի էրկու կնկատեր:

Մուղաթ մե գընցնա, օր մե Միրզա Մահմուդ պարկուկ կէղնի, կնիկ մե աջ կողմ, կնիկ մե ձախ կողմ, տղեն լե վըր սրտին:

— Կնկտի՛ք,— կըսե Միրզա Մահմուդ,— էրազ իմ տեսի:

— Խեբ էղնի, խեբ էղնի, էրազդ ի բարին,— կըսին կնկրտիք մեկ բերան:

— Էրազնուվեր տեսա՛: արև իմ մեկ կուշտն էր, լուսնակն իմ մեկեկ կուշտ, աստղ մը լե վըր իմ սրտին: Արևելոց թագավորի աղջիկ, Արևպտոց թագավորի աղջիկ, էրազսի բարի՛ն կատարվավ:

